## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

# ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՁՈՐԵՐՈՒՄ

Ես լինէի մի գետակ հայրենիքիս ձորերում,
Կապոյտ կոհակ մի վտակ հայրենիքիս ձորերում,

Խոխոջալով հոսէի, ափերիս հետ խօսէի
Երգի նման ներդաշնակ հայրենիքիս ձորերում,

Այգուց այգի վազէի ու ծառերին դալարիկ
Բաշխէի ջուրն իմ յստակ հայրենիքիս ձորերում:

Ուռիները լուային ոսկէ վարսերն հարսնի
Յորձանքիս մէջ անյատակ՝ հայրենիքիս ձորերում

Ջրերս ընծայ բերէի պապիս մամռած ջաղացին
Հին չինարու շուքի տակ՝ հայրենիքիս ձորերում:

Հնձուոր մի հարս սեւորակ գար աղբիւրս սառնորակ
Լցնէր սափորն սպիտակ հայրենիքիս ձորերում:

Այծեամն էլ գար, ջուր խմէր, համբուրէի շուրթը թուխ
Եւ ոտները իր բարակ հայրենիքիս ձորերում:

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ